ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԱՐԹԻԿԻ ԵՐԵԿՈՅԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՒԾԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2002 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 25-Ի N 1392-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

2023 թվականի N - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԱՐԹԻԿԻ ԵՐԵԿՈՅԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՒԾԱՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2002 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 25-Ի N 1392-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստ Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի «զ» կետի ու 25-րդ հոդվածի 2-ր մասի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օր 33-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 34-րդ հոդվածի պահանջները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Լուծարել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Արթիկի երեկոյան դպրոց պետական ոչ առևտրային կազմակերպությունը (պետական գրանցման համարը՝ 53.210.00440, գրանցման օրը՝ 13.03.2003 թվական):

2. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահին՝ «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Արթիկի երեկոյան դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության լուծարման աշխատանքներն իրականացնելու նպատակով սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 15-օրյա ժամկետ

ստեղծել լուծարման հանձնաժողով՝ կազմում ընդգրկելով Հայաստանի Հանրապետութ
ֆինանսների նախարարության (մեկ անդամ), Հայաստանի Հանրապետության
արդարադատության նախարարության (մեկ անդամ), Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի (մեկ անդամ), Հայաստանի Հանրապետության
տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գ
կառավարման կոմիտեի (երկու անդամ՝ հանձնաժողովի նախագահ և անդամ-քարտուղ
և Շիրակի մարզպետարանի (մեկ անդամ) ներկայացուցիչներին:

3. Շիրակի մարզպետին՝

1) լուծարման հանձնաժողովի ստեղծման պահից հետո մեկամսյա ժամկետում ապահո
«Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Արթիկի երեկոյան դպրոց» պետակ
առևտրային կազմակերպության համապատասխան փաստաթղթերի և գույքի, այդ թվ
դրամական միջոցների, արժեթղթերի և գույքային իրավունքների հանձնումը լուծարմա
հանձնաժողովին.

2) հաստատել լուծարման հանձնաժողովի կողմից կազմված լուծարման հաշվեկշիռը.

3) լուծարման աշխատանքներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում սահմանված
կարգով ապահովել «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Արթիկի երեկոյ
դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության գործունեության դադարեցման
պետական գրանցման համար անհրաժեշտ միջոցները»:

3. Սահմանել, որ՝

1) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Արթիկի երեկոյան դպրոց» պետա
ոչ առևտրային կազմակերպության պարտատերերի հետ հաշվարկներն ավարտելուց հ
դեբիտորական պարտքերի ստացման և այլ պահանջների իրավունքները վերապահվո
Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությանը.

2) Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Արթիկի երեկոյան դպրոց» պետա
ոչ առևտրային կազմակերպության պարտատերերի պահանջների բավարարումից հետ
մնացած դրամական միջոցները փոխանցվում են Հայաստանի Հանրապետության
պետական բյուջե, իսկ այլ գույքի առկայության դեպքում այն հանձնվում է Շիրակի
մարզպետարանի տնօրինությանը:

5. Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի
«Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական
հաստատություններ» պետական հիմնարկները վերակազմակերպելու, «Հայաստանի
Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն»
պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրությունը
հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի
հոկտեմբերի 28-ի N 661 որոշման մեջ փոփոխություններ կատարելու և 1996 թվականի
մայիսի 15-ի N 150 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1392-Ն որոշման 6-րդ
կետում կատարել հետևյալ փոփոխությունը՝

«Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Արթիկի երեկոյան դպրոց» պետակ
առևտրային կազմակերպության մասով՝ «Պետական ոչ առևտրային
կազմակերպությունների մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի «է» ենթակետով
սահմանված՝ լուծարման հանձնաժողովի նշանակման լիազորությունը վերապահել

Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքներ
նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեին»։

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող
տասներորդ օրը։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան